

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

ք. Երևան

Երեքը հունիսի երկու հազար քսանչորս թվականի

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության, որի անունից հանդես է գալիս նախարար Գևորգ Պապոյանը (այսուհետ՝ Լիազոր մարմին), ով գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման հիման վրա, մի կողմից,
և

«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ՝ 08279909, գրանցված 31.05.2024թ., գրանցման համարը՝ 264.120.1390913, գտնվելու վայր՝ Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2-րդ փակուղի 8 շենք, 41 ոչ բնակելի տարածք), ի դեմս Գլխավոր տնօրեն Արտաշես Տոնոյանի, ով գործում է Ձեռքբերողի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Ձեռքբերող), մյուս կողմից (այսուհետ՝ առանձին՝ Կողմ, համատեղ՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասը, կնքեցին սեփականության օտարման գործընթացի մասին սույն պայմանագիրը, հետևյալի մասին.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.1. **Արձանագրություն՝** Օրենքի 7-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշմամբ սահմանված՝ օտարվող սեփականության նկարագրության արձանագրություն (սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության օրինակելի ձև):
- 1.2. **Գույքային իրավունք ունեցող՝** Պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձ, որը Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Տարածքում գտնվող հողամասի կամ հողամասի վրա գտնվող անշարժ գույքի նկատմամբ ունի օրենքով սահմանված կարգով գրանցված ցանկացած գույքային իրավունք:
- 1.3. **Լիազոր մարմին՝** (նախատեսված օտարման գործառույթների իրականացումը համակարգող)՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն:
- 1.4. **Կարգավիճակը չճշտված շինություն՝** Տարածքում առկա ինքնակամ շենք կամ շինություն, որում բնակվում են առանձին ընտանիքներ, որոնք ունեն էլեկտրոններգիայի և ջրի մատակարարման առանձին հաշվիչներ:

- 1.5. **Որոշում՝** Պայմանագրի ստորագրումից հետո ընդունվող ՀՀ կառավարության որոշում, որով Տարածքում Քաղաքաշինական ծրագրի իրականացումը համարվում է հանրության գերակա շահ, և որով սահմանված հիմնական պայմանները (ներառյալ, բայց չսահմանափակված՝ Քաղաքաշինական ծրագիրը, սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը) համապատասխանում են Պայմանագրով նախատեսվածներին:
- 1.6. **Պայմանագիր՝** սույն պայմանագիրն իր բոլոր հավելվածներով, փոփոխություններով և լրացումներով:
- 1.7. **Սեփականատեր՝** Պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձ, որը Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Տարածքում գտնվող հողամասի կամ հողամասի վրա գտնվող անշարժ գույքի նկատմամբ ունի օրենքով սահմանված կարգով գրանցված սեփականության իրավունք կամ չունի օրենքով սահմանված կարգով գրանցված սեփականության իրավունք, սակայն ունի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր:
- 1.8. **Սեփականություն՝** Սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող հողամաս կամ հողամասի վրա գտնվող անշարժ գույք, որը ենթակա է օտարման Քաղաքաշինական ծրագրի իրականացման համար:
- 1.9. **Տարածք՝** տարածք, որի նկատմամբ Որոշմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ:
- 1.10. **Քաղաքաշինական ծրագիր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշմամբ հավանություն ստացած՝ Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC)) կառուցելու քաղաքաշինական կառուցապատման ծրագիր: Քաղաքաշինական ծրագրի վերջնաժամկետ է սահմանվում 2029 թվականի դեկտեմբերի 31-ը: Քաղաքաշինական ծրագրի վերջնաժամկետը երկարաձգվում է Պայմանագրով նախատեսված գույքի օտարման հետ կապված դատական վեճերի քննության ժամանակահատվածով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1 Ձեռքբերողը պարտավորվում է Քաղաքաշինական ծրագրի կենսագործման նպատակով Օրենքով, Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ձեռք բերել Տարածքում գտնվող Սեփականատերերին, պետությանը և համայնքին պատկանող հողամասերը և դրանց վրա գտնվող անշարժ գույքը:
- 2.2 Լիազոր մարմինը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Ձեռքբերողին օտարել Տարածքում առկա Լիազոր մարմին պատկանող հողամասերը և դրանց վրա գտնվող անշարժ գույքը, ինչպես նաև

AS

Լիազոր մարմնի միջոցով իրականացնել Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

- 3.1. Լիազոր մարմինը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7 (յոթ) օրվա ընթացքում Օրենքով սահմանված կարգով ուղարկել այն Սեփականատերերին և Գույքային իրավունքներ ունեցողներին՝ Ձեռքբերողին տրամադրելով Սեփականատերերի և Գույքային իրավունքներ ունեցողների անունները կամ անվանումները և Օրենքի 17-րդ հոդվածով սահմանված նրանց հասցեները:
- 3.2. Լիազոր մարմինը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 15-օրյա ժամկետում ապահովել Որոշումից ծագող Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների գրանցումը ՀՀ անշարժ գույքի հետ կապված իրավունքների գրանցումն իրականացնող պետական մարմնում:
- 3.3. Լիազոր մարմինը պարտավոր է Որոշումը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակելուն հաջորդող 7 (յոթ) օրվա ընթացքում հրապարակել այն նաև ոչ պակաս, քան 3000 տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցում:
- 3.4. Լիազոր մարմինը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 4 (չորս) ամսվա ընթացքում կազմել Արձանագրություն՝ կազմմանը մասնակից դարձնելով Ձեռքբերողի կողմից նշանակված ներկայացուցչին:
- 3.5. Լիազոր մարմինը պարտավոր է Արձանագրության օրինակ՝ այն կազմելուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկել Սեփականատիրոջը և(կամ) Գույքային իրավունքներ ունեցողներին, իսկ դրա պատճենը ուղարկել նաև Ձեռքբերողին:
- 3.6. Արձանագրությունը Լիազոր մարմնին բողոքարկելու դեպքում, Լիազոր մարմինը պարտավոր է վարչական վարույթին որպես երրորդ անձ մասնակից դարձնել Ձեռքբերողին: Արձանագրությունը դատական կարգով բողոքարկելու դեպքում, Լիազոր մարմինը պարտավոր է տեղեկացնել Ձեռքբերողին: Առանց Ձեռքբերողի համաձայնության Լիազոր մարմինն իրավունք չունի ընդունել հայցը կամ բողոք բերող անձի հետ կնքել հաշտության համաձայնություն:
- 3.7. Որոշման դատական կարգով բողոքարկման դեպքում, Լիազոր մարմինը պարտավոր է տեղեկացնել Ձեռքբերողին: Առանց Ձեռքբերողի համաձայնության Լիազոր մարմինն իրավունք չունի ընդունել հայցը կամ բողոք բերող անձի հետ կնքել հաշտության համաձայնություն:
- 3.8. Ի կատարումն Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտականության, Ձեռքբերողը պարտավոր է վճարման պահանջը և հիմնավորող փաստաթղթերը

ստանալուն հաջորդող 7 (յոթ) օրվա ընթացքում հատուցել Լիազոր մարմնին՝ Պայմանագրի 3.1 և 3.5 կետերի իրականացման հետ կապված փոստային ծախսերը, Պայմանագրի 3.3 կետի իրականացման հետ կապված հրապարակման ծախսերը և Պայմանագրի 3.4 կետի իրականացման հետ կապված արձանագրությունը կազմելու ծախսերը, Պայմանագրի 3.7 կետի իրականացման հետ կապված դատական ծախսերը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ

- 4.1. Ձեռքբերողը պարտավոր է Օրենքով սահմանված կարգով սեփական միջոցներով իրականացնել Սեփականության օտարումը: Սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետ է սահմանվում 24 ամիս՝ սկսած Որոշման ուժի մեջ մտնելու օրվանից:
- 4.2. Ձեռքբերողը պարտավոր է գերծ պահել Լիազոր մարմնին ցանկացած վնասից, որ կարող է առաջանալ Սեփականության օտարման արդյունքում կամ հետևանքով՝ կապված Սեփականության դիմաց փոխհատուցման անհամարժեքության և օտարման գործընթացի համար սահմանված ժամկետի խախտման հետ: Վնասի առաջացման դեպքում Ձեռքբերողը պարտավորվում է փոխհատուցել այդ վնասն ամբողջ ծավալով և իր միջոցներով: Լիազոր մարմինը պարտավոր է համագործակցել Ձեռքբերողի հետ նշված վնասի առաջացման վտանգը ծագելու պահից սկսած (ներառյալ, բայց չսահմանափակված, մասնակից դարձնելով Ձեռքբերողին ընդդեմ Լիազոր մարմնի ներկայացված հայցերի պատասխանի նախապատրաստմանը, հաշտության համաձայնության վերաբերյալ բանակցություններին և այլն), ինչպես նաև օրինական ջանքեր գործադրի՝ ուղղված վնասի չափի հաշվարկը նվազեցնելուն:
- 4.3. Ձեռքբերողը պարտավոր է Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով Սեփականության շուկայական արժեքն որոշելիս հաշվի առնել նաև այդ գույքային իրավունքի շուկայական արժեքը, եթե Սեփականությունն օրինական շինություն է, որը գտնվում է պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա, իսկ Սեփականատերը պետության կամ համայնքային սեփականություն հողամասի նկատմամբ ունի օրենքով սահմանված կարգով գրանցված գույքային իրավունք՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով:
- 4.4. Ձեռքբերողը պարտավոր է Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով Սեփականության շուկայական արժեքն որոշելիս հաշվի առնել նաև այդ Սեփականության տակ գտնվող հողամասի նկատմամբ օգտագործման իրավունքը եթե Սեփականությունն օրինական շինություն է, որը գտնվում է պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա, իսկ Սեփականատերը պետության կամ համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասի նկատմամբ չունի օրենքով սահմանված կարգով գրանցված գույքային իրավունք:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԿՑ

- 5.1. Տարածքում պետության սեփականությունը հանդիսացող գույքերը օտարվում են ուղղակի եղանակով՝ ուղղակի վաճառքի միջոցով «Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն:
- 5.2. Պայմանագրի 5.1 կետում նշված պետության սեփականություն հանդիսացող հողամասը, ինչպես նաև Տարածքում առկա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ համաձայն Որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ենթակա են օտարման տվյալ պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇՄԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

- 6.1. Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով Որոշումն անվավեր ճանաչելու դեպքում Պայմանագիրը համարվում է անվավեր, իսկ Կողմերն ազատվում են միմյանց նկատմամբ Պայմանագրով սահմանված կամ Պայմանագրի հետ առնչվող բոլոր պարտավորություններից, այդ թվում՝ վնասի հատուցման պարտավորություններից:
- 6.2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որևէ սեփականության մասով Որոշումն անվավեր ճանաչելու դեպքում Ձեռքբերողն պարտավոր է այդ պահից սկսած 3-ամսյա ժամկետում սեփականատիրոջ հետ բանակցությունների միջոցով ձեռք բերել այն և շարունակել Պայմանագրի իրականացումը: Եթե Ձեռքբերողին նշված ժամկետում չի հաջողվում ձեռք բերել այդ գույքը, ապա Լիազոր մարմինն իրավունք ունի դատական կարգով պահանջել Պայմանագրի վաղաժամկետ լուծում: Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո Լիազոր մարմնի առաջարկությամբ ՀՀ Կառավարությունն իրավունք ունի Որոշումն ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչել:
- 6.3. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով Ձեռքբերողի մասով Որոշումը ՀՀ կառավարության որոշմամբ կամ դատական կարգով անվավեր ճանաչելու դեպքում Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված:
- 6.4. Եթե Ձեռքբերողն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության Սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ Օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ Ձեռքբերողը հրաժարվում է տվյալ Սեփականությունը ձեռք բերելուց, և տվյալ Սեփականության մասով հանրության գերակա շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր:

7. ՁԵՌՔԵՐՈՂԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

7.1. Ձեռքբերողը Լիազոր մարմնին երաշխավորում է, որ՝

7.1.1. ունի անհրաժեշտ իրավասություն և լիազորություն կնքելու Պայմանագիրը.

7.1.2. Օրենքով, Որոշմամբ և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացման համար ունի համապատասխան կադրային պոտենցիալ, ֆինանսական և տեխնիկական միջոցներ:

8. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

8.1. Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում Որոշումը չվիճարկելու դեպքում Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետի ավարտի պահից սկսած Լիազոր մարմինը երաշխավորում է, որ Որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8.2. Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում Որոշումը վիճարկելու դեպքում Որոշումը անվավեր ճանաչելու պահանջը մերժելու դատարանի ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած Լիազոր մարմինը երաշխավորում է, որ Որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

9. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. Լիազոր մարմինն իրավունք ունի՝

9.1.1. Ձեռքբերողից պարբերաբար պահանջել ներկայացնել տեղեկատվություն՝ պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքի մասին.

9.1.2. Համապատասխան մարմնի միջոցով անարգելք կատարել կառուցվող շենքի արտաքին և այլ մակերեսների չափագրման աշխատանքներ և կազմելու համապատասխան ակտ:

9.2. Լիազոր մարմինը պարտավոր է՝

9.2.1. Ձեռքբերողին ողջամիտ ժամկետում տրամադրել Պայմանագրին և Որոշմանն առնչվող իրեն հայտնի և էական նշանակություն ունեցող տեղեկությունները:

9.3. Ձեռքբերողը պարտավոր է՝

- 9.3.1. չիրապարակել սեփականության օտարման ընթացքում իրեն հայտնի դարձած Հայաստանի Հանրապետության օրենքներով գաղտնիք հանդիսացող տեղեկությունները.
- 9.3.2. չխոչընդոտել Հիազոր մարմնի կողմից իրականացվող ցանկացած ուսումնասիրությունը, որը կապված է Քաղաքաշինական ծրագրի իրականացման հետ:
- 9.4. Հիազոր մարմինը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իր լիազորությունների շրջանակում աջակցել Ձեռքբերողին Տարածքի ձեռք բերմանը՝ Օրենքով սահմանված կարգով:

10. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 10.1. Կողմը պարտավոր է հատուցել Օրենքի, Որոշման կամ Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում, ինչպես նաև սխալ երաշխավորության արդյունքում մյուս Կողմին պատճառված վնասները:
- 10.2. Հիազոր մարմնի կողմից Պայմանագրի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը համարվում է պետության կողմից Պայմանագրի պայմանների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում:

11. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 11.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով պարտավորությունները մասամբ կամ ամբողջովին չկատարելու համար պատասխանատվությունից, եթե այդ չկատարումն անհաղթահարելի ուժի հանգամանքների, այսինքն՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, ապստամբությունների, պատերազմների, ռազմական գործողությունների և այլնի հետևանք է հանդիսացել, եթե այդ հանգամանքները Պայմանագրի կնքման պահին անկանխատեսելի բնույթ էին կրում, ի հայտ են եկել Պայմանագրի կնքման ամսաթվից հետո և անմիջականորեն ազդել են դրա կատարման վրա:
- 11.2. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ի հայտ գալու դեպքում, Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափ: Կողմը, որի համար վերոհիշյալ պատճառներով Պայմանագրով պարտավորությունների կատարումն անհնարին է դարձել, պարտավոր է գրավոր տեղեկացնել մյուս Կողմին նման հանգամանքների ի հայտ գալու կամ վերանալու մասին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Ֆորս-մաժորային իրադրությունը պետք է սահմանված կարգով և ժամկետներում հաստատված լինի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից:

- 11.3. Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է 3 (երեք) ամիս և ավելի, ապա Կողմերը պետք է լուծեն Պայմանագրով պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ Պայմանագրի լուծման հարցը ինչի մասին Կողմերը ստորագրում են առանձին լրացուցիչ համաձայնագիր:

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՅԹՆԵՐ

- 12.1. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Պայմանագրից բխող կամ դրա առնչությամբ ծագող որևէ ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:
- 12.2. Պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել Ձեռքբերողի կամ Լիազոր մարմնի կողմից Պայմանագրով կամ Օրենքով նախատեսված այն դեպքերում, որոնք չեն պահանջում լուծման պարտադիր դատական կարգ: Նման դեպքերում Կողմը պարտավոր է նախապես՝ առնվազն 3 (երեք) ամիս առաջ, գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով պատշաճ տեղեկացնել մյուս Կողմին Պայմանագրի միակողմանի վաղաժամկետ լուծման մասին՝ կցելով համապատասխան հիմքերն ու հիմնավորումները:
- 12.3. Կողմերի միջև փոխադարձ համաձայնություն կամ պայմանավորվածություն ձեռք չբերվելու դեպքում Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել դատական կարգով Ձեռքբերողի կողմից, եթե Լիազոր մարմինը չի կատարում սույն Պայմանագրի 3-րդ և 4-րդ գլխով սահմանված պարտավորությունները:
- 12.4. Կողմերի միջև փոխադարձ համաձայնություն կամ պայմանավորվածություն ձեռք չբերվելու դեպքում Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել դատական կարգով Լիազոր մարմնի կողմից, եթե Ձեռքբերողը չի կատարում չի կատարում սույն Պայմանագրի 3-րդ և 4-րդ գլխով սահմանված պարտավորությունները:
- 12.5. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում մեղավոր Կողմը պարտավոր է հատուցել Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքով մյուս Կողմին պատճառված վնասները:
- 12.6. Պայմանագրի պայմանների (բացառությամբ Կողմի գտնվելու հասցեի) փոփոխությունները, լրացումները և ուղղումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որը ձևակերպվում է լրացուցիչ համաձայնագրով, որն ուժի մեջ է մտնում Որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: Կողմի գտնվելու հասցեում փոփոխություններ, լրացումներ և ուղղումները համարվում են կատարված մյուս Կողմերին պատշաճ ծանուցելու պահից:
- 12.7. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից Պայմանագրի մեկական օրինակ պահվում է Կողմերի մոտ:

A.F.

12.8. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

12.9. Պայմանագրի գործողությունը դադարում է Քաղաքաշինական ծրագրի ավարտի պահից, ինչի մասին Լիազոր մարմինը և Ձեռքբերողը կազմում են արձանագրություն: Այդ դեպքում Պայմանագրի ավարտն ինքնին չի ազատում Կողմերին մինչ արձանագրության կազմելն իրար ներկայացված վնասի հատուցման պահանջներից:

12.10. Պայմանագրի որևէ մասի անվավերությունը չի հանգեցնում Պայմանագրի այլ մասերի անվավերության:

13. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ

ՁԵՌՔԵՐՈՂ

Հայաստանի Հանրապետություն
Ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարության

«Համաշխարհային առևտրի կենտրոն
Երևան» ՓԲԸ

Գևորգ Պապոյան
Նախարար

Արտաշես Տոնոյան
Գլխավոր տնօրեն

